

Հավելված №3
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2025 թվականի հոկտեմբերի --ի №---Ա որոշման

«Հավելված №3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

1. Սույն կարգը սահմանում է Հանրային կազմակերպությունների կողմից կատարված գնումների մասին հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացման ընթացակարգը և գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիթորինգի մեխանիզմներն ու գործիքները, իրականացման և արդյունքների հրապարակման պարբերականությունն ու ձևաչափը:
2. Հաշվետվությունը ներկայացվում է Հանրային կազմակերպության կողմից մրցակցային ընթացակարգերով իրականացվող և փաստացի իրականացված գնումների վերաբերյալ՝ սույն կարգի հավելվածով հաստատված համապատասխանաբար Գ-1 և Գ-2 ձևերով:
3. Հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակային կարգով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 15-ը, և տարեկան՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը:
4. Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով նախատեսված Հանրային կազմակերպության մասով հաշվետվությունները ներկայացնելու պարտավորությունը կրում է նույն հավելվածի 1-ին կետով նախատեսված այն Հանրային կազմակերպությունը, որը, անկախ բաժնեմասի (փայաբաժնի) չափից, ունի այդ կազմակերպության կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու, նրա որոշումների կայացման (կիրառման) վրա ազդելու

կամ կազմակերպության գործունեության ուղղությունները, ոլորտները կանխորոշելու հնարավորություն:

5. Հանրային կազմակերպությունը Հաշվետվությունը ուղեկցող գրությամբ Հանձնաժողով է ներկայացնում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով:
6. Առձեռն կամ փոստային եղանակով ներկայացման դեպքում Հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացվում նաև invest.report@psrc.am էլեկտրոնային հասցեին՝ սույն կարգի 8-րդ կետում նշված ֆորմատներով:
7. Էլեկտրոնային եղանակով Հաշվետվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry) կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով Հաշվետվությունը ներկայացվում է Հանձնաժողովի սահմանած կարգով:
8. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Հաշվետվությունը ներկայացվում է XLS (իքսէլէս), XLSX (էքսէլէսիքս) կամ ODS (օդիէս) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական unicode (յունիկոդ) տառատեսակով, իսկ այլ տվյալներ ներկայացնելու համար կիրառելի են DOC (դոկ), DOCX (դոկիքս) կամ PDF (փիդիէֆ) ֆորմատները:
9. Առձեռն եղանակով ներկայացման դեպքում Հաշվետվության ներկայացման օր է համարվում Հանձնաժողովում Հաշվետվության և ուղեկցող գրության փաստացի մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ Հաշվետվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) ներկայացման դեպքում՝ Հաշվետվության և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման դեպքում՝ այդ համակարգի կողմից ինքնաշխատ

եղանակով հաշվետվություններ ներկայացրած անձին հաշվետվությունների ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը:

10. Հանձնաժողով ներկայացված Հաշվետվությունում սահմանված ձևերին անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում Հանրային կազմակերպությունը Հանձնաժողովի կողմից տեղեկացվում է այդ մասին և տեղեկացվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Հաշվետվություն կամ Հաշվետվությանն առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:
11. Հաշվետվության կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության, կամ տարբեր պատճառներով այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում Հանրային կազմակերպությունը սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների հիման վրա լրացնում և Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում Հաշվետվությունը ներկայացնում է Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում Հաշվետվությունում կատարում է փոփոխություններ և Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Հաշվետվություն:
12. Հանձնաժողով ներկայացված Հաշվետվությունում Հանրային կազմակերպության կողմից սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում ևս վերջինս կարող է ներկայացնել ճշգրտված Հաշվետվություն: Սույն կարգի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի Հաշվետվությունից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված:

13. Հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջներին այդ կազմակերպությունների կողմից Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության և գնումներին վերաբերող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու նպատակով Հանձնաժողովն իրականացնում է մոնիթորինգ:
14. Հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված պահանջների կատարման մոնիթորինգն ուղղված է.
- 1) Հանրային կազմակերպությունների կողմից իրականացվող գնման գործընթացների կազմակերպման արդյունքում հատուցման դիմաց արժեքի ապահովման գնահատմանը,
 - 2) Հանրային կազմակերպությունների կողմից ծախսվող միջոցների արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ գնման գործընթացների բարելավման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից առաջարկությունների ներկայացման միջոցով:
15. Հանձնաժողովի կողմից հանրային կազմակերպությունների գնումների մոնիթորինգը ներառում է.
- 1) գնումների գործընթացի կազմակերպման մոնիթորինգը,
 - 2) գնումների առանձին գործարքների մոնիթորինգը:
16. Հանրային կազմակերպությունների գնումների գործընթացի կազմակերպման մոնիթորինգը ներառում է.
- 1) ռիսկային գործարքների վերհանումը,
 - 2) ընթացակարգերի ընտրության հիմնավորվածության գնահատումը,
 - 3) մրցակցային ընթացակարգերի կշռի գնահատումը ընդհանուր ծավալում,
 - 4) հրապարակված գնումների պլանով նախատեսված և փաստացի իրականացված գնումների համապատասխանության ստուգումը:
17. Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների մոնիթորինգը ներառում է.

- 1) Հանրային կազմակերպությունների կողմից գնման գործընթացի պլանավորման կամ նախապատրաստման մոնիթորինգը,
- 2) գնման գործընթացի կազմակերպման մոնիթորինգը,
- 3) պայմանագրի կնքման և կատարման մոնիթորինգը:

18. Հանձնաժողովը հանրային կազմակերպությունների գնումների գործընթացի մոնիթորինգի իրականացման նպատակով իրավասու է ներգրավել անկախ փորձագետների:

19. Գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվում է՝ ելնելով Հանրային կազմակերպությունների կողմից հրապարակված կամ Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքներից:

20. Մոնիթորինգի իրականացման արդյունքում Հանրային կազմակերպության կողմից Հանձնաժողովի սահմանած պահանջների խախտման փաստի հաստատման դեպքում կատարված գնումների ընթացքում ձևավորված ծախսերը (ներդրումները) համարվում են չհիմնավորված և սակագների հաշվարկման ընթացքում կարող են չփոխհատուցվել կամ փոխհատուցվել մասնակի:

21. Մոնիթորինգի արդյունքներն ամփոփումից հետո մեկամսյա ժամկետում ենթակա են հրապարակման Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ բացառությամբ օրենսդրության համաձայն առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող դեպքերի: